եւ յերրորդ աւուր յարուցեալ, (եւ) երկնաւ յերկինս նովին մարմնովն նստաւ ընդ աջմէ Հօր. գալոց է նովին մարմնովն փառօք՝ դատել զկենդանիս եւ զմեռեալս. որոյ թագաւորութեանն ոչ գոյ վախճան:

Հաւատամք եւ ի սուրբ Հոգին, ոչ օտար ի Հօրէ եւ յՈրդւոյ, այլ նոյնքնութիւն Հօր եւ Որդւոյ, յանեղն (եւ) ի կատարեալն, (ի բարեխօսն), որ խօսեցաւ յօրէնս եւ ի մարգարէս եւ յաւետարանս, որ էջն ի Յորդանան, քարոզեաց յառաքեալսն (եւ) բնակեցաւ ի սուրբսն:

Հաւատամք յայս մի միայն ընդհանրական եւ առաքելական Եկեղեցի. ի մի մկրտութիւն ապաշխարութեան ի բաւութիւն եւ ի թողութիւն մեղաց[1]. ի յարութիւն մեռելոց. ի դատաստանն յաւիտենից հոգւոց եւ մարմնոց. յարքայութիւն երկնից եւ ի կեանսն յաւիտենականս:

Իսկ որք ասեն՝ էր երբեմն, յորժամ՝ ոչ էր Որդի, կամ էր երբեմն յորժամ՝ ոչ էր սուրբ Հոգին, կամ թէ յոչէից եղեն, կամ յայլմէ էութենէ կամ ի գոյութենէ ասել լինել զՈրդին Աստուծոյ եւ կամ զսուրբ Հոգին՝ (եւ) թէ փոփոխելի է կամ այլայլելի, զայսպիսին նզովեմք, քանզի նզովէ զնոսա մայր մեր կաթողիկէ եւ առաքելական Եկեղեցի: Եւ նզովեմք զամենեսին՝ որ ոչն խոստովանին զյարութիւն մարմնոյ. եւ զամենայն հերձուած, այս ինքն զայնոսիկ՝ որ ոչն են ի հաւատոց աստի յայսմանէ սրբոյ եւ միայնոյ կաթողիկէ եկեղեցւոյ:

ποις χωρὶς ἁμαρτίας, ἀληθινῶς καὶ οὐ δοκήσει ἐσχηκότα, παθόντα, τουτέστι σταυρωθέντα, ταφέντα καὶ ἀναστάντα τῇ τρίτῃ ἡμέρᾳ, καὶ ἀνελθόντα εἰς οὐρανοὺς ἐν αὐτῷ τῷ σώματι ἐνδόξως, καθίσαντα ἐν δεξιᾷ τοῦ Πατρὸς, ἐρχόμενον ἐν αὐτῷ τῷ σώματι ἐν δόξῃ κρίναι ζῶντας καὶ νεκρούς, οὗ τῆς βασιλείας οὐκ ἔσται τέλος.

Πιστεύομεν καὶ εἰς τὸ Πνεῦμα τὸ ἅγιον, τὸ οὐκ ἀλλότριον Πατρὸς καὶ Υἱοῦ, ἀλλ᾽ὁμοούσιον ὂν Πατρὶ καὶ Υἱῷ, τὸ ἄκτιστον, τὸ τέλειον, τὸ Παράκλητον, τὸ λαλήσαν ἐν νόμῳ καὶ ἐν προφήταις καὶ εὐαγγελίοις, καταβὰν ἐπὶ τὸν Ἰορδάνην, κηρύξαν ἀποστόλοις, οἰκοῦν ἐν ἁγίοις.

Πιστεύομεν εἰς μίαν μόνην ταύτην καθολικὴν καὶ ἀποστολικὴν ἐκκλησίαν· εἰς ἓν βάπτισμα μετανοίας καὶ ἀφέσεως ἁμαρτιῶν, εἰς ἀνάστασιν νεκρῶν, εἰς κρίσιν αἰώνιον ψυχῶν τε καὶ σωμάτων, εἰς βασιλείαν οὐρανῶν καὶ ζοὴν αἰώνιον.

Τοὺς δε λέγοντας ὅτι ἦν ποτε, ὅτε οὐκ ἦν ὁ Υἱὸς· ἢ ἦν ποτε ὅτε οὐκ ἦν τὸ ἅγιον Πνεῦμα· ἢ ὅτι ἐξ οὐκ ὄντων ἐγένετο, ἢ ἐξ ἑτέρας ὑποστάσεως ἢ οὐσίας, φάσκοντας εἶναι τρεπτὸν ἢ ἀλλοιωτὸν τὸν Υἱὸν τοῦ Θεοῦ ἢ τὸ ἅγιον Πνεῦμα· τούτους ἀναθεματίζομεν, ὅτι αὐτοὺς ἀναθεματίζει ἡ καθολικὴ μήτηρ ἡμῶν καὶ ἀποστολικὴ ἐκκλησία· καὶ ἀναθεματίζομεν πάντας τοὺς μὴ ὁμολογοῦντας ἀνάστασιν σαρκὸς καὶ πᾶσαν αἵρεσιν, τουτέστι τοὺς μὴ ὄντας ἐκ ταύτης τῆς πίστεως τῆς ἁγίας καὶ μόνης καθολικῆς ἐκκλησίας.

---

[1] «Ի մի մկրտութիւն ապաշխարութեան ի թողութիւն մեղաց», որն որ համեմատ է Պետրոսի Առաքելոյ խօսքերուն (Գործ. Բ. 38) «Ապաշխարեցէք եւ մկրտեսջիք իւրաքանչիւր որ ի ձէնջ յանուն Յեսուսն մերոյ Յիսուսի Քրիստոսի ի թողութիւն մեղաց», կը ճշդուի չափահաս մկրտելեաց վրայ՝ որոնց որ կ՝աւանդուէր հանգանակն ի հնումն: